ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-429-17.11.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 52-րդ հոդվածը՝

1) 1-ին մասում «գործառնության համար» բառերը փոխարինել «գործառնության, դրա համար» բառերով.

2) 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) հարկային հաշվարկի լրացման կարգով սահմանված այլ տվյալները:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Հարկային մարմինը կարող է իր տեղեկատվական բազայում առկա տվյալների (այդ թվում՝ Օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված) հիման վրա ինքնաշխատ նախալրացնել հարկային հաշվարկները:»:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 147.1-ին հոդվածով.

«**Հոդված 147.1. Սոցիալական ծախսերը**

1. Սոցիալական ծախսեր են համարվում հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի՝ իր և իր ընտանիքի անդամների համար՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված՝ առողջապահության, կրթության և բնակարանային ապահովության գծով ծախսերը:

2. Սույն հոդվածով սահմանված սոցիալական ծախսերի տեսակների առանձին ուղղությունները, ընտանիքի անդամների շրջանակը և փոխհատուցման առավելագույն չափերը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 156-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1 Եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) օրենսդրությամբ սահմանված՝ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվությունը չի լրացվում:».

2) 4-րդ մասի 2-րդ կետում «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով, իսկ «հաշվարկներ» բառից հետո լրացնել «(հայտարարագրեր)» բառը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) չներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին

հաջորդող հարկային տարվա մայիսի 1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):

Ֆիզիկական անձինք սույն մասով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկները (հայտարարագրերը) ներկայացնում հետևյալ ժամկետներում.

1) 2023 թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները,

բ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավել համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր, փայատեր, անդամ),

գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,

2) 2024 թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

բ. 2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

գ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները,

դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2023 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավել համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր փայատեր, անդամ),

ե. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

զ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,

է. սույն պարբերության 1-ին կետում նշված ֆիզիկական անձինք.

3) 2025 թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող տարիների համար Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Անկախ սույն մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգավորումներից, 2023 թվականի և 2024 թվականի հաշվետու տարիների համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) չեն ներկայացնում այն անձինք, որոնց վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն համարվող՝ հարկվող եկամուտների մասով:».

4) 5-րդ մասում «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մարտի 1-ը» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 158-րդ հոդվածի՝

1) վերնագրում «վճարումը» բառից հետո լրացնել «և սոցիալական ծախսերի փոխհատուցումը (վերադարձը)» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի՝ Օրենսգրքի 147.1-րդ հոդվածով սահմանված սոցիալական ծախսերը Օրենսգրքի 143-րդ հոդվածով սահմանված հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերով հաշվարկված և (կամ) վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի կողմից) եկամտային հարկի գումարից փոխհատուցվում (վերադարձվում) են Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 5. Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Անկախ սույն գլխով սահմանված դրույթներից՝ Կառավարությունը կարող է սահմանել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում հաշվառման պարզեցված կարգ:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք կարող են 2023 թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող չորս հաշվետու տարիների մասով Հայաստանի Հանրապետությունից դուրս ստացված կամ ստացման ենթակա մինչև 12 միլիոն դրամ եկամուտների մասով օտարերկրյա պետություններում այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան հաշվարկված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկանքներ չներկայացնել հարկային մարմին:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառվում է 2023 թվականի հարկային տարվա և հետագա հարկային տարիների համար ներկայացվող անհատական տեղեկությունների մասով:

3. Սույն օրենքի կիրարկումն ապահովող Կառավարության որոշումները Կառավարությունն ընդունում է սույն օրենքն ընդունվելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

(Կ-429-17.11.2022-ՏՀ-011/1)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 7. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 52-րդ հոդվածը՝

4) 1-ին մասում «գործառնության համար» բառերը փոխարինել «գործառնության, դրա համար» բառերով.

5) 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) հարկային հաշվարկի լրացման կարգով սահմանված այլ տվյալները:».

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Հարկային մարմինը կարող է իր տեղեկատվական բազայում առկա տվյալների (այդ թվում՝ Օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված) հիման վրա ինքնաշխատ նախալրացնել հարկային հաշվարկները:»:

Հոդված 8. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 147.1-ին հոդվածով.

«**Հոդված 147.1. Սոցիալական ծախսերը**

3. Սոցիալական ծախսեր են համարվում հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի՝ իր և իր ընտանիքի անդամների համար՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով սահմանված հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված՝ առողջապահության, կրթության և բնակարանային ապահովության գծով ծախսերը:

4. Սույն հոդվածով սահմանված սոցիալական ծախսերի տեսակների առանձին ուղղությունները, ընտանիքի անդամների շրջանակը և փոխհատուցման առավելագույն չափերը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 156-րդ հոդվածը՝

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1 Եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) օրենսդրությամբ սահմանված՝ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվությունը չի լրացվում:».

6) 4-րդ մասի 2-րդ կետում «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով, իսկ «հաշվարկներ» բառից հետո լրացնել «(հայտարարագրեր)» բառը.

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) չներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ անչափահաս համարվող ֆիզիկական անձանց ~~դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն~~) մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ~~ապրիլի~~ մայիսի ~~20~~1-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին են ներկայացնում եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր):

Ֆիզիկական անձինք սույն մասով սահմանված՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկները (հայտարարագրերը) ներկայացնում հետևյալ ժամկետներում.

3) 2023 թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները,

բ. ~~2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նոտար հանդիսացող (հանդիսացած) ռեզիդենտ ֆիզիկական անձինք՝ անձնական եկամուտների մասով,~~

~~գ.~~ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2022 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավել համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր. ~~(~~փայատեր, անդամ),

~~դ~~գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

~~ե~~դ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,

~~զ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում փաստացի օգտվել են Օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված եկամտային հարկի վերադարձման համակարգից,~~

~~է. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2023 թվականի ընթացքում եկամուտներ են ստացել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից.~~

4) 2024 թվականի հաշվետու տարվա համար՝

ա. 2024 թվականի ընթացքում վարձու աշխատող համարված՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

բ. 2024 թվականի ընթացքում քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում հարկվող եկամուտ ստացած՝ սույն պարբերության 1-ին կետում չնշված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

գ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության և (կամ) հանրային պաշտոններ զբաղեցնող ՀՀ քաղաքացիները,

~~դ. 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ նոտար հանդիսացող (հանդիսացած) ռեզիդենտ ֆիզիկական անձինք՝ անձնական եկամուտների մասով,~~

դ~~ե~~. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) 2023 թվականի արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավել համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր (փայատեր, անդամ),

ե~~զ~~. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում,

զ~~է~~. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն,

~~ը. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի ընթացքում փաստացի օգտվել են Օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված եկամտային հարկի վերադարձման համակարգից,~~

~~թ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք 2024 թվականի ընթացքում եկամուտներ են ստացել Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից,~~

~~ժ~~է. սույն պարբերության 1-ին կետում նշված ֆիզիկական անձինք.

3) 2025 թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող տարիների համար Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Անկախ սույն մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգավորումներից, 2023 թվականի և 2024 թվականի հաշվետու տարիների համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) չեն ներկայացնում այն անձինք, որոնց վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն համարվող՝ հարկվող եկամուտների մասով:».

8) 5-րդ մասում «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մարտի 1-ը» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 158-րդ հոդվածի՝

3) վերնագրում «վճարումը» բառից հետո լրացնել «և սոցիալական ծախսերի փոխհատուցումը (վերադարձը)» բառերը,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Հարկային տարվա ընթացքում ֆիզիկական անձի՝ Օրենսգրքի 147.1-րդ հոդվածով սահմանված սոցիալական ծախսերը Օրենսգրքի 143-րդ հոդվածով սահմանված հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերով հաշվարկված և (կամ) վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի կողմից) եկամտային հարկի գումարից փոխհատուցվում (վերադարձվում) են Կառավարության սահմանած կարգով:»:

~~Սույն մասով սահմանված սոցիալական ծախսերի փոխհատուցումից չեն կարող օգտվել Օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկի վերադարձման համակարգից փաստացի օգտված ֆիզիկական անձինք:»:~~

~~**Հոդված 11.** Օրենսգրքի 160-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.~~

~~«10. Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 4.1-ին մասով սահմանված կարգով և ժամկետներում ֆիզիկական անձի կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկներ (հայտարարագրեր) չներկայացնելու դեպքում սույն հոդվածով սահմանված՝ ֆիզիկական անձանց վերադարձված եկամտային հարկի գումարները ենթակա են հետ վերադարձման պետական բյուջե:»:~~

~~**Հոդված 12.**~~**Հոդված 11.**Օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Անկախ սույն գլխով սահմանված դրույթներից՝ Կառավարությունը կարող է սահմանել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հարկային մարմնում հաշվառման պարզեցված կարգ:»:

~~**Հոդված 13.**~~**Հոդված 12.**Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

4. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք կարող են 2023 թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող չորս հաշվետու տարիների մասով ~~Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից~~ Հայաստանի Հանրապետությունից դուրս ստացված կամ ստացման ենթակա մինչև 12 միլիոն դրամ եկամուտների մասով՝~~-~~ օտարերկրյա պետություններում՝~~-~~ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան հաշվարկված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկանքներ ~~ֆիզիկական անձինք կարող են հարկային մարմին~~ չներկայացնել հարկային մարմին:

5. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառվում է 2023 թվականի հարկային տարվա և հետագա հարկային տարիների համար ներկայացվող անհատական տեղեկությունների մասով:

6. Սույն օրենքի կիրարկումն ապահովող Կառավարության որոշումները Կառավարությունն ընդունում է սույն օրենքն ընդունվելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-429-17.11.2022-ՏՀ-011/1) ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-429[1]-17.11.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	**3-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի՝ 1) 1-ին կետում «2-րդ կետում» բառերից հետո լրացնել «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով, իսկ» բառերը, 2) 2-րդ կետում՝ • «անչափահաս» բառից առաջ լրացնել «բացառությամբ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բառերը, • «անչափահաս» բառից հետո լրացնել «համարվող» բառը, • «դեպքում՝ ծնողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն» բառերը հանել, • «ապրիլի 20-ը» բառերը փոխարինել «մայիսի 1-ը» բառերով, • հանել երկրորդ պարբերության 1-ին կետի «բ.», «զ.» և «է.» ենթակետերը, ինչպես նաև 2-րդ կետի «դ.», «ը.» և «թ.» ենթակետերը, • վերանայել 2-րդ պարբերության 1-ին կետի «ա.» ենթակետից հետո համարակալումները և 2-րդ կետի «գ.» ենթակետից հետո համարակալումները, • լրացնել նոր պարբերություն հետևյալ խմբագրությամբ. «Անկախ սույն մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված կարգավորումներից, 2023 թվականի և 2024 թվականի հաշվետու տարիների համար եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարա-	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացումներ և փոփոխություններ:	Ընդունվել է:

			րագիր) չեն ներկայացնում այն անձինք, որոնց վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն՝ սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն համարվող՝ հարկվող եկամուտների մասով:», 3) 1-ից 4-րդ կետերով կատարվող փոփոխությունները և լրացումը կատարել նույն հոդվածի 2-ից 5-րդ կետերով, 4) 1-ին կետում սահմանել հետևյալը. «1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով. «3.1 Եկամտային հարկի տարեկան հաշվարկում (հայտարարագրում) օրենսդրությամբ սահմանված՝ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվությունը չի լրացվում:»:		
2.	**ՀՀ կառավարություն**	**4-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետի «Սույն մասով սահմանված սոցիալական ծախսերի փոխհատուցումից չեն կարող օգտվել Օրենսգրքի 160-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկի վերադարձման համակարգից փաստացի օգտված ֆիզիկական անձինք:» բառերը հանել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	**ՀՀ կառավարություն**	**5-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
4.	**ՀՀ կառավարություն**	**5-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածից հետո խմբագրել հոդվածների համարակալումը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է:

5.	**ՀՀ կառավարություն**	**6-րդ հոդված**	Առաջարկվում է՝ 1) 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձինք կարող են 2023 թվականի հաշվետու տարվա և դրան հաջորդող չորս հաշվետու տարիների մասով Հայաստանի Հան-րապետությունից դուրս ստացված կամ ստացման ենթակա մինչև 12 միլիոն դրամ եկամուտների մասով օտարերկրյա պետություններում այդ պետությունների օրենսդրությանը համապատաս-խան հաշվարկված եկամտային հարկի գումարների վերաբերյալ տեղեկանքներ չներկայացնել հարկային մարմին:», 2) 6-րդ հոդվածում լրացնել նոր՝ 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետը կիրառվում է 2023 թվականի հարկային տարվա և հետագա հարկային տարիների համար ներկայացվող անհատական տեղեկությունների մասով:»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն և լրացում:	Ընդունվել է:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի վերաբերյալ					
1.	**ՀՀ կառավարություն**	**1-ին հոդված**	Նպատակ ունենալով նվազեցնել նախագծով առաջարկվող վարչական տուգանքների չափ և նախատեսել նախազգուշացում առաջին անգամ եկամտային հարկի հաշվարկը չներկայացնելու դեպքերի համար՝ առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Հոդված 1.«**Հոդված 1.** 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169[1]-րդ հոդվածում՝ 1) երկրորդ պարբերությունում «Հայտարարագիրը» բառը փոխարինել «Բացառությամբ սույն հոդվածի երրորդ, չորրորդ և հինգերորդ պարբերություններով սահմանված դեպքերի, հայտարարագիրը» բառերով.	Ընդունվել է: Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			2) լրացնել հետևյալ բովանդակությամբ երրորդ, չորրորդ, հինգերորդ և վեցերորդ պարբերություններ. «Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) հարկային մարմին սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է նախազգուշացում: Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) սույն հոդվածի երրորդ պարբերությամբ նախատեսված վարչական տույժի միջոցը կիրառելուց հետո 30 օրվա ընթացքում չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ ա. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, որոնք հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում են (հանդիսացել են) դրան նախորդող տարվա արդյունքներով մեկ միլիարդ դրամ և ավել համախառն եկամուտ հայտարարագրած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ առևտրային կազմակերպության մասնակից (բաժնետեր փայատեր, անդամ)՝ նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով, բ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, որոնք «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրական շահառու են համարվում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով, գ. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, որոնք հաշվետու տարվա		

			ընթացքում ստացել են 20 միլիոն դրամի չափով կամ ավելի փոխառություն՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով, դ. սույն պարբերության «ա», «բ» և «գ» կետերում չնշված ֆիզիկական անձանց համար սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով: Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց կողմից եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) սույն հոդվածի չորրորդ պարբերությամբ նախատեսված վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո 30 օրվա ընթացքում չներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) սահմանված ժամկետում չներկայացնելու համար սույն հոդվածի չորրորդ պարբերությամբ նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով: Եկամտային հարկի տարեկան հաշվարկ (հայտարարագիր) ներկայացնելու պարտավորություն ունեցող անձը սույն հոդվածի չորրորդ պարբերության մեկից ավելի կետերում ներառված լինելու դեպքում այդ անձի նկատմամբ կիրառվում է սույն հոդվածի չորրորդ պարբերությամբ նախատեսված առավելագույն չափի տուգանքի մեծությունը:»:		
2.	**ՀՀ կառավարություն**	**2-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածում «հունվարի 1-ից» բառերից հետո լրացնել «և կիրառվում է 2023 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) չներկայացնելու դեպքերի մասով:» բառերը:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:	Ընդունվել է: